



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Սանուկյան փող., 5 շենք, հեռ. (+374)10570830, (+374)10554057
Էլ.huuցե hasarakakan.kartsiq@gmail.com

**Հանրային ազդիտյի բովանդակային ուսումնասիրությունը և ստ
ազմավարական ուղղությունների**

Երևան 2018

Հանրային ռադիոյի բովանդակային ուսումնասիրություն ըստ ռազմավարական ուղղությունների

Հետազոտության շրջանակներում անդրադարձել ենք՝ Հանրային ռադիոյի ծրագրային քաղաքականությանը, որը ներառում է հիմնական թեմատիկան, ուղղվածությունը, տեսակները, ժանրային կառուցվածքը, հաղորդումների պատրաստման և հեռարձակման առանձնահատկությունները:

Խոսելով ընդհանուր առմամբ հաղորդումների լեզվի մասին՝ ասենք, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն հայերենն է, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց հաղորդումների լեզվի անաղարտությունը: Այս առումով Հանրային ռադիոն անհամեմատելի է այլ ռադիոալիքների հետ համեմատությամբ: Այստեղ պահպանվում է լեզվի անաղարտությունը, եթերից մատուցվում է միայն գրագետ, մշակված հայերեն խոսք. սխալները նվազագույնի են հասցված, որոնք ակնհայտ և ընդգծված բնույթի չեն: Ժարգոնային կամ առօրյա խոսակցական լեզվի կարելի է հանդիպել միայն ռեպորտաժների ընթացքում, որը բնական է, սակայն ակնհայտորեն մինիմալի է հասցված: Ասենք նաև, որ Հանրային ռադիոյով եթեր են հեռարձակվում լեզվի պահպանմանն ու անաղարտությանը ուղղված հաղորդումներ՝ *«Խոսենք հայերեն»* և *«Մենք և մեր բառերը»*: Անդրադառնալով *«Մենք և մեր բառերը»* հաղորդմանը՝ ասենք, որ, ըստ էության, հաղորդումն ունի ուսուցողական բնույթ, սակայն այն իր բնույթով ոչ բոլորի համար է հասանելի: Չնայած նրան, որ հաղորդման հեղինակ-վարող Վարդգես Ավետիսյանը մատուցվող թեման և բառերը ներկայացնում է մանրամասն բացատրելով՝ այնուամենայնիվ հաղորդումը լսելու և որ ավելի կարևոր է հասկանալու համար անհրաժեշտ է արդեն իսկ որոշակի գիտելիքների, լեզվական տերմինների և հասկացությունների իմացություն:

«Խոսենք հայերեն» հաղորդումն այս առումով ավելի մատչելի է և տևում է մոտ երեքից չորս րոպե:

Ըստ օրենքի՝ օտար լեզուներով ռադիոհաղորդումները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները (հատվածները) հեռարձակվում են հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ձայնային կամ լուսագրային եղանակով:

Ասենք, որ Հանրային ռադիոն պահպանում է հեռարձակման նմանատիպ քաղաքականությունը՝ ներկայացնելով հայերեն հաղորդումներ: Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվում է «Հայաստանը մեր տունն է» հաղորդումը ռուսերենով, սակայն սա դիտարկվում է որպես արտերկրի համար հեռարձակվող հաղորդում, որի վրա չեն տարածվում օրենքի այս հոդվածի դրույթները:

Իսկ ինչ վերաբերում է այլ լեզուների ուսուցման նպատակով կազմակերպվող հեռուստառադիոդասընթացներին, ինչպես նաև երգերին ու երաժշտական այլ ժանրերի ստեղծագործություններին, ապա դրանք կարող են եթեր հեռարձակվել առանց հայերեն թարգմանության: Հանրային ռադիոն ունի անգլերենի ուսուցման հաղորդում-դասընթաց՝ «Միդլթոն-անգլերենի ուսուցում», որը հեռարձակվում է շաբաթական երկու անգամ: Հաղորդումը անգլերենով է: Չնայած հաղորդման սկզբում նշվում է, որ հաղորդումն ուղղված է ինչպես բառապաշարի հարստացմանը, այնպես էլ ընկալելու և լսելու կարողությունների զարգացմանը, սակայն տպավորություն է, որ հաղորդումը նախատեսված է անգլերենի միջին հենք ունեցողների համար և ուղղված է լսելու կարողությունների և ճիշտ առոգանության զարգացմանը: Հաղորդումը ներկայացվում է ամբողջությամբ անգլերենով, չկա որևէ հարցի շուրջ բացատրություն կամ մեկնաբանություն: Ասենք, որ հաղորդումը իրականացվում է British Council-ի հետ համատեղ, որը կայքում տեղադրված են նմանատիպ աուդիո և վիդեո հոլովակներ: Նման հաղորդումներ կարելի է գտնել Youtube.com կայքում: Այսինքն՝ որպես ռադիոհաղորդում՝ «Միդլթոն-անգլերենի ուսուցումը», այդքան էլ հաջողված չէ ինչպես թիրախային խմբերի ներգրավման, այնպես էլ մատուցման տեսանկյունից:

Խոսելով ռադիոյի ելքային տվյալների մասին, ասենք, որ ռադիոընկերությունները պարտավոր են ամեն օր եթերում հայտարարել իրենց անվանումները, ներկայացնել խորհրդանիշները՝ ազդականչերը, ներդիրները, այլ ելքային տվյալներ, ինչպես նաև օրվա հաղորդումների ծրագիրը: Հանրային ռադիոն յուրաքանչյուր առավոտ՝ ժամը 05:57, հեռարձակում է «Կոչնակը»՝ հայտարարելով ռադիոյի անունն ու ներկայացնելով օրվա ծրագիրը: Ասենք նաև, որ Կոչնակի ընթացում հնչում է նաև Հայաստանի օրհներգը: Ռադիոյի ազդականչերը պարբերաբար հնչում են նաև օրվա ընթացքում:

Ռադիոն յուրաքանչյուր հեռարձակվող հաղորդման ավարտին, ըստ կարգի, պետք է նշի (հայտարարի) տվյալ հաղորդման արտադրողի մասին տեղեկություններ: Հանրային ռադիոն յուրաքանչյուր հաղորդման ավարտին նշում է հաղորդման անվանումը, հեղինակին, հաղորդավարին: Հաղորդումների սկզբում հակիրճ ներկայացվում է նաև հաղորդման նպատակը, ներկայացվում են թևավոր խոսքեր, ինչպես նաև հաղորդումների մեծամասնությունը ունի կարգախոսներ:

Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադիոընկերություն, որի գործունեությունն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն:


Հանրային հեռուստառադիոընկերության ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման բնագավառում գործունեությունն իրականացնում է Հանրային ռադիոընկերությունը:

Հաղորդումների բազմազանության տեսանկյունից Հանրային ռադիոն պահպանում է հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը՝ ներկայացնելով տարբեր ոլորտների հաղորդումներ: Խոսելով հաղորդումների և հաղորդաշարերի տեսակների բազմազանության մասին, նշենք, որ Հանրային ռադիոն ունի երեսունից ավելի անուն հաղորդումներ, սակայն շատ են այն հաղորդումները, որոնք ինչպես բովանդակային, այնպես էլ ներկայացման ֆորմատով գրեթե նույնական են և եթե հաղորդման ընթացքում հաղորդման անունը չնշվի, սովորական ունկնդիրը միգուցե դժվարանա հասկանալ, թե որ հաղորդումն է այդ պահին լսում: Որպես նմանօրինակ հաղորդումներ կարելի է դիտարկել *«Հայկական հետք»*, *«Ժամանակի վկան»*, *«Անկախության պատմություն»*, *«1918. Վերածնունդ»* և այլ հաղորդումներ:

Հանրային ռադիոն իր եթերում ներկայացնում է նաև տարբեր ոլորտային թեմաներ՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը, ինչպես նաև

ռադիոլսարանին մատուցում է այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում հաշվի են առնվում Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը: Այստեղ առանձնահատուկ կարելի է դիտարկել «Հարթակ», «Էկոսֆերա», «Սպառողի ժամ», «Ստատուս Քվո» հաղորդումները:

Ըստ վերջին տվյալների Հանրային ռադիո լսում է հարցված ռադիոլսողների մոտավորապես 47%-ը (Գծապատկեր 1), որը բավականին լավ ցուցանիշ է նախորդ տարիների տվյալների հետ համեմատությամբ:




Գծապատկեր 1

Ինչպես արդեն նշվեց, Հանրային ռադիոն՝ որպես միակ պետական և հանրային ռադիոալիք, պետք է ապահովի տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն: Հաղորդումների ունկնդրումն ու հասարակ վերլուծությունը ցույց են տալիս, որ բազմազանությունն իսկապես առկա է, սակայն բովանդակային, թեմատիկ և թիրախային խմբերի տարանջատման առումով հաղորդումները սահմանազատված չեն: Հարնային ռադիո ունկնդրելիս տպավորություն է ստեղծվում, որ անընդհատ լսում ես նույն հաղորդումը, նույն ձայնը, որը խոսում, պատմում է տարբեր թեմաներ, այսինքն՝ նկատվում է դինամիկայի պակաս, որը կորցնում է հետաքրքրությունը ռադիոյի նկատմամբ անկախ հաղորդման բուն հետաքրքրությունից: Այս փաստարկը ունի նաև վիճակագրական հիմնավում: Այսպես՝ հիմնական պատճառների շարքում,

թե ինչու չեն լսում Հանրային ռադիո, հարցվածների մեծ խումբ՝ 41,1% նշել է, որ Հանրային ռադիոն իրեն հետաքրքիր չէ:

Հարցվածների մի խումբ էլ քանակական հարցումների ընթացքում նշել է, որ Հանրային ռադիոն հին է և իրեն հետաքրքիր չէ: Եթե հաշվի առնենք նաև այն հանագամանքը, որ ռադիոն հարցվածները դիտարկում են նախևառաջ երաժշտություն կամ լուրեր լսելու միջոց (Գծապատկեր 2¹), հետաքրքիր չէ տարբերակը հիմնավորվում է, քանի որ Հանրային ռադիոյում գրեթե բացակայում են երաժշտական հաղորդումները: Երաժշտություն Հանրային ռադիոյով հնչում է միայն երեկոյան ժամերին, իսկ երեկոյան ժամերը հարցվածների շրջանում դիտարկվում են որպես այլ մեդիաաղբյուրներից օգտվելու ժամեր:




Գծապատկեր 2

¹ Տոկոսային նման պատկեր ստացվել է մեկից ավելի պատասխանի հնարավորության առկայության հետևանքով (հարցվողներին թույլ է տրվել նշել մեկից ավելի պատասխան)

Հաղորդումների ընթացքում հնչող երաժշտությունը լսում են հիմնականում այն ունկնդիրները, ովքեր նշել են, թե ալիքները թեքում են այնքան, մինչև երաժշտություն գտնեն, այսինքն՝ կարող է պարզապես զուգադիպել:

Իսկ ինչ վերաբերում է լուրերին, ապա Հանրային ռադիոն ժամը մեկ հաճախականությամբ ներկայացնում է կարճ լուրեր, ինչպես նաև ժամը 14:00-ին լուրեր արևմտահայերենով, որտեղ ներկայացվում են լուրեր ինչպես Հայաստանից, այնպես էլ սփյուռքի հայկական համայնքներից:

Ասենք նաև, որ Հանրային ռադիոյի ունկնդիրը չունի սիրելի հաղորդում Հանրային ռադիոյով (Գծապատկեր 3): Այս տվյալը կրկին փաստում է Հանրային ռադիոյի հաղորդումների նմանօրինակությունը:



Գծապատկեր 3

Ինչպես երևում է գծապատկերից հարցվածների մեծամասնությունը նշել է, որ չունի սիրելի հաղորդում: Հարցվածների երկրորդ մեծ խումբն էլ դժվարացել է պատասխանել հարցին, իսկ ինչ վերաբերում է այլ տարբերակների, ապա կրկին տեսնում ենք ընդհանրական կատեգորիաներ այն էլ ցածր տոկոսային ցուցանիշներով:

Հանրային ռադիոյի հաղորդումների ռազմավարական և բովանդակային ուղղությունների վերլուծությունը ցույց տվեց, որ չնայած նրան, որ ռադիոն պահպանում է օրենքում նշված դրույթները և առաջնորդվում է համապատասխան

ծրագրային քաղաքականությամբ՝ ապահովելով թեմատիկ բազմազանություն,
այնուամենայնիվ հաղորդումներում, դրանց ներկայացման ֆորմատում առկա է
դինամիկայի պակաս, նմանօրինակություն, որը գրավիչ չէ ունկնդրի համար: